

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՅԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՄԱՍԼՈ ԱՍՈՒԼԻՍԸ.

«Անհանդուրժող եմ լինելու ցանկացած անօրինական գործողության նկատմամբ և ջանք ու եռանդ չեմ խնայելու ապահովելու մարզի անխափան զարգացումը»

Այսօր անցկացվեց Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանի տարեվերջյան ամփոփիչ մամլո ասուլիսը, որին մասնակցում էին տեղական և հանրապետական լրատվամիջոցների մարզային ներկայացուցիչները:

Մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, ողջունելով ներկաներին և շնորհակալություն հայտնելով ասուլիսին ներկա գտնվելու համար, նախ ամփոփ կերպով ներկայացրեց 2019թ. ըստ ոլորտների իրականացված աշխատանքները և ձեռքբերումները:

Նա նախ անդրադարձավ քաղաքաշինության ոլորտին՝ խոսելով ամենալուրջ ներդրումներ ունեցած ճանապարհաշինության բնագավառին:

2019թ-ին փաստացի կատարված աշխատանքների ծավալը կազմել է 4.81 մլրդ դրամ, որից պետ. բյուջեի ֆինանսավորումով՝ 2.87 մլրդ դրամ, այլ միջոցներով՝ 1.94 մլրդ դրամ: Նշված միջոցներով հիմնանորոգվել է 74 կմ, իսկ 28.05 կմ երկարությամբ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում, ավարտը նախատեսված է 2020թ-ին: Լոռու մարզպետարանին մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար 2019թ.-ին հատկացվել էր 119.583 մլն դրամ, փաստացի վճարվել է՝ 99.1 մլն դրամ, որից ընթացիկ ձմեռային պահպանման համար՝ 24.8 մլն դրամ, ընթացիկ ամառային պահպանման համար՝ 74.3 մլն դրամ: Խնայողությունը կազմել է 20.483 մլն դրամ: Առավել խոշոր ծրագրերն են. Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների երկրորդ փուլը: Ծրագրի արժեքը՝ 8.742 մլրդ դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են. ներկայումս ընթանում են ճանապարհի լայնացման, ճանապարհային պաստառի պրոֆիլի բերման, հիմնատակի կառուցման և ինժեներական ցանցերի տեղափոխման աշխատանքներ: Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 51.74 կմ, որից 38.41կմ՝ Լոռու մարզում: Ավարտը նախատեսված է 2020թ-ի աշնանը:

-Ճանապարհի կառուցման ժամկետների ուշացումների պատճառը նախագծում հրնթացս կատարված փոփոխություններն են եղել: Այժմ աշխատանքերը կրկին թափ են առել,-ասաց Ա. Ղուկասյանը:

Մ-3՝ Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 12.2 կմ երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգում. պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 921.8 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Ավարտը նախատեսված է 2020թ-ին:

Մ-8՝ Վանաձոր-Դիլիջան միջպետական նշանակության ավտոճանապարհի 20 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 1.205 մլրդ դրամ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:

Մ-7՝ Մ-3 – Սպիտակ – Գյումրի - Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 8.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում ծրագիրն իրականացվում է ՀՀ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ: Պայմանագրային ընդհանուր արժեքը՝ 435 մլն դրամ: Ավարտը նախատեսված է 2020թ-ին:

Մ7 - Մեծ Պարնի - Ծաղկաբեր 6.24 կմ երկարությամբ ճանապարհահատվածի հիմնանորոգում: Պայմանագրային արժեքը՝ 656.4 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և ՀՀ պետ. բյուջեի համաֆինանսավորմամբ: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Քաղաքաշինության ոլորտում 2019թ. իրականացվել են նաև շուրջ 1.77 մլրդ. դրամի շինարարական աշխատանքներ: Ըստ ֆինանսավորման աղբյուրների. ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 673.13 մլն դրամի, որից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե՝ 606.13 մլն դրամ, ՀՀ մշակույթի նախարարություն՝ 67 մլն դրամ: Դոնոր կազմակերպությունների և մասնավոր ներդրողների կողմից՝ 602 մլն դրամ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ/ՀՏՁՀ/՝ 494.2 մլն դրամ(դպրոցների գազաֆիկացում, տանիքների վերանորոգում, ջրագծերի փոխարինում և լուսավորության անցկացում): 2019թ. – ին նշված բոլոր ուղղություններով աշխատանքներն ավարտված են:

Քաղաքաշինության ոլորտում առավել խոշոր ծրագրերն են. Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցումը (ծրագրային արժեքը՝ 1.150 մլրդ. դրամ): Աշխատանքները սկսվել են 2014թ.-ին: 2019թ. իրականացվել է՝ 172.497 մլն.դրամի աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:

Վանաձորի Միքայել Թավրիգյանի անվան արվեստի պետական քոլեջի վերակառուցումը(ծրագրային արժեքը՝ 647.656 մլն. դրամ): Աշխատանքները սկսվել են 2017թ.: 2019թ. իրականացվել է 211.457 մլն դրամի աշխատանք: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքները կավարտվեն 2020 թվականին:

Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ (ծրագրային արժեքը՝ 1.239 մլրդ.դրամ): Աշխատանքները սկսվել են 2017թ-ին: 2019թ. իրականացվել է 222.181 մլն.դրամի աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Աշխատանքները կավարտվեն 2020 թվականին:

Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում (ծրագրային արժեքը՝ 798 մլն դրամ): Շինարարական աշխատանքները սկսվել են 2017թ: 2018թ. կատարվել է 196.4 մլն.դրամի աշխատանքներ: Ծրագիրն իրականացվել է ՀՏՀՀ-ի կողմից՝ Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: 2019թ. իրականացվել են 602 միլիոն դրամի աշխատանքներ: Աշխատանքներն ավարտված են:

Մարզպետն անդրադարձավ նաև «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման ծրագրի» շրջանակներում իրականացված աշխատանքներին.2019թ.ին ավարտվել է 44 բարձր պատրաստականության կիսակառույց տների շինարարությունը, որի համար հատկացվել է 458 մլն դրամ: Այստեղ շուրջ 147 մլն դրամի տնտեսում է կատարվել և հնարավորություն է ստեղծվել ևս 7 անավարտ տներ շահագործման հանձնել: 2019թ.-ին պետբյուջեից հատկացվել է 452 մլն դրամ «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման ծրագրի» շարունակական ընթացքի համար: Այս միջոցների շրջանակներում աշխատանքները ևս սկսված են. նախատեսվում է ավարտին հասցնել ևս 24 կիսակառույցի շինարարություն, 1 սենյականոցի շահառու հանդիսացող 7 ընտանիքի և 2 սենյականոցի հավակնող 1 շահառուի տրվել է գումարային փոխհատուցում:

Եվս 31 բարձր պատրաստականություն ունեցող տների շինարարություն է նախատեսվում ավարտին հասցնել այս միջոցների շրջանակներում, որոնք իրականացված են եղել շինարարական թերություններով: ՀՀ կառավարության որոշմամբ 2019 թ. պետական բյուջեով նախատեսված Կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 674,782.0 հազ. դրամ է հատկացվել Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված թվով 121 ընտանիքի վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրման համար:

-Լիովին կիսելով դեռևս բնակարանի իրենց հերթին սպասող լոռեցիների վրդովմունքն՝ ուզում են վստահեցնել, որ խնդիրը օր առաջ լուծելու հարցում կառավարության դիրքորոշումը հստակ է և վերջնական,-ասաց Ա. Ղուկասյանը: Նա հիշեցրեց նաև, Գուգարք համայնքի Էներգետիկների 3-րդ փողոցի հրդեհված N5 բազմակացարան ոչ հիմնական շինության նախկին բնակիչներ հանդիսացող թվով 7 ընտանիքի բնակարանային խնդիրը բնակարանի գնման վկայագրի տրամադրման միջոցով լուծելու ՀՀ կառավարության որոշման մասին: Այդ նպատակով Լոռու մարզպետարանին կհատկացվի 27 մլն 750 հազ.դրամ՝ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

Ա. Ղուկասյանն անդրադարձավ նաև պետություն-համայնք համատեղ ներդրմամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերին՝ նշելով, որ այս տարի իրականացվել է 56 ծրագիր՝ ընդհանուր առմամբ շուրջ 1.8 մլրդ դրամ ընդհանուր ներդրմամբ(2018թ.-ին իրականացվել է 506 մլն դրամ ընդհանուր արժողությամբ 20 ծրագիր):2020թ. նախատեսվում է գերազանցել այս ցուցանիշը:

Առողջապահության ոլորտում ևս, ըստ մարզի ղեկավարի, լուրջ ձեռքբերումներ են արձանագրվել: Մարզի առողջապահական ընկերություններում կտրուկ աճել են վճարովի ծառայությունների մուտքերը: Եթե 2018թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ վճարովի ծառայությունները կազմում էին 688434.4 հազ. դրամ, այդ թվում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 290019.7 հազ. դրամ, ապա 2019 թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ՝ վճարովի ծառայությունները կազմել են 984660.4 հազ. դրամ, այդ թվում՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 611292.4 հազ. դրամ: «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարեսկզբին ունեցած շուրջ 150 մլն. դրամ պարտքը 2019թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է՝ նոր տնօրինության կողմից ճիշտ ղեկավարման և տնտեսավարման, ինչպես նաև դրամաշրջանառությունը «սպիտակ դրամարկղով» իրականացնելու շնորհիվ: Վերոնշյալ փաստը ապացուցում է, որ ավելացել են մատուցվող ծառայությունների ծավալները և որակը, մեծացել է ազգաբնակչության վստահությունը:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն նորակառույց շենք տեղափոխվելուց հետո օրակարգային էր դարձել սրտային հիվանդություններով հիվանդների վիրաբուժական բուժօգնության հարցը, որը տարբեր տեխնիկական խնդիրների պատճառով անընդհատ հետաձգվում էր: ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղուկասյանի գործուն միջամտությամբ, Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության պետ Ա. Մխիթարյանի և «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Մկրտչյանի ջանքերով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2019թ. հուլիսի 22-ից բացվել է նոր, ժամանակակից սարքավորումներով հագեցած «Ինվազիվ կարդիոլոգիայի՝ միջամտային սրտաբանության և ինտերվենցիոնալ ռադիոլոգիայի՝ միջամտային ճառագայթաբանության» բաժանմունք, որտեղ իրականացվում են և վճարովի, և անվճար ծառայություններ՝ պետական պատվերի շրջանակներում: Բաժանմունքում աշխատելու նպատակով հրավիրվել են բարձրակարգ 2 բժիշկներ՝ Արմեն Օքրոյանը և Վահե Նավասարդյանը: Վահե Նավասարդյանը Հայաստան է վերադարձել Թավշյա հեղափոխությունից հետո Սանկտ Պետերբուրգից, իսկ Արմեն Օքրոյանը՝ Երևանից, երկուսն է կայուն մտադրությամբ՝ ապրելու և աշխատելու Վանաձորում: Բաժանմունքում ընդունվել են աշխատանքի նաև Երևանում մասնագիտական վերապատրաստում անցած 3 ռենտգեն տեխնիկներ, 6 բուժքույրեր: Հետագայում՝ բաժանմունքի գործունեության ընթացքում, կազմը կհամալրվի նոր մասնագետներով: Բաժանմունքի գործարկման հիման վրա Վանաձորի բժշկական կենտրոնին ՀՀ առողջապահության նախարարության կողմից լրացուցիչ տրամադրվել է պետական պատվեր՝ ինվազիվ սրտաբանության համար, որից օգտվելու հնարավորություն ունեն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված անձինք, հաշմանդամության խումբ ունեցողները, զինծառայողները, նրանց ընտանիքի անդամները և նրանց հավասարեցված անձինք:

-Վստահ եմ կարճ ժամանակ անց Վանաձորի բժշկական կենտրոնը կդառնա տարածաշրջանում եզակի առողջապահական ըկերություն, որը մատուցվող ծառայությունների առումով կկարողանա մրցակցել հանրապետության ամենաառաջավոր կլինիկաների հետ,-ասաց մարզի ղեկավարը:

Նա նաև անդրադարձավ մարզի առողջապահական այլ հիմնարկների ձեռքբերումներին: «Ավավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ՏՈՒՐ սարքավորում՝ 4 մլն.200 դր արժեքով, կլինիկական արյունաբանական վերլուծիչ 3 մլն.200 դր արժեքով, 1 «ՌԻագ» մակնիշի շտապ

օգնության մեքենա: 2018 թվականի հուլիսի 1-ից, այնուհետև 2019 թվականի հունվարի 1-ից ՀՀ –ում բարձրացվել են առաջնային օդակի բուժաշխատողների աշխատավարձերը՝ գրեթե 30 տոկոսով, իսկ հիվանդանոցային օդակի բուժաշխատողներինը դեռևս մնում են նույնը: Լոռու մարզի հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող առողջապահական ընկերությունների բուժաշխատողների աշխատավարձերը հնարավոր եղավ բարձրացնել ընկերություններում վճարովի ծառայությունների ավելացման շնորհիվ: Այսպես, եթե 2018թ. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում բժշկի միջին աշխատավարձը կազմել է 267.000 դրամ, 2019թ. այն կազմում է շուրջ 455.000 դրամ: Իրականացվել են նաև այլ աշխատանքներ.Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի հետ համատեղ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ մարզի բուժքույրերի համար: Արդեն վերապատրաստվել են թվով 63 բուժքույրեր: «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է շտապօգնության գծային մեքենա՝ հագեցված օժանդակ սարքավորումներով: «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել որովայնային լապարասկոպիայի սարքերի և գործիքների հավաքածու, բիրքիմիական անալիզատոր, հեմատոլոգիական անալիզատոր, տեսահսկման սարքավորումներ: «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել Յազ լազերային համակարգ՝ ներառյալ սեղան և լրակազմ: «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել իմունաֆերմենտային անալիզատոր: ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցության շրջանակներում և երիտասարդ բժիշկների հետ տարվող աշխատանքի արդյունքում ընդունվել են աշխատանքի նպատակային օրդինատուրայով մասնագիտացված երիտասարդ բժիշկներ՝«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 1 վիրահատող մանկաբարձ-գինեկոլոգ, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 1 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, 1 սրտաբան, «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում և «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ համատեղությամբ մեկ բժիշկ ռադիոլոգ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Գուգարք» ԿՊ» ՓԲԸ-ին է տրամադրվել թվային ռենտգեն սարքավորում: Մի շարք առողջապահական ընկերություններ համալրվել են բժշկական սարքավորումներով և գույքով: Մարզի առողջապահական ընկերությունները սերտ համագործակցել են մի շարք միջազգային ընկերությունների հետ՝ «Վորլդ Վիժն Հայաստան», Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ /«COAF»/: Հայաստանի Մանուկներ

Բարեգործական հիմնադրամ /«COAF»/-ի կողմից մի շարք ընկերություններում կատարվել են վերանորոգման աշխատանքներ, տրամադրվել գույք և սարքավորումներ: «Արարատ» մոր և մանկան առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 12 հաշմանդամ երեխաներ և 12 խնամող:

Կրթության ոլորտում ևս ձեռքբերումներ են արձանագրվել. ՀՀ Լոռու մարզում 2019թ-ին համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվն ավելացել է 2-ով (Գյուլագարակի և Մեծ Պարնիի նախադպրոցական ուսումնական հաստատություններ, 119 երեխա՝ 4 խմբով), իսկ դպրոցահեն նախակրթարանների թիվը՝ 1-ով (Սպիտակի թիվ 2 հիմնական դպրոց, 30 երեխա՝ 1 խմբով): 2019 թ-ի փետրվարի 14-ից մարտի 13-ը կազմակերպվել և անց է կացվել դպրոցականների առարկայական օլիմպիադանների տարածքային և մարզային փուլերը, որոնց մասնակցել են համապատասխանաբար՝ 1420 և 612 աշակերտներ: Մարզային փուլի արդյունքում 111 /նախորդ տարում՝ 120/ աշակերտներ իրավունք են նվաճել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

2019թ-ի դպրոցականների առարկայական օլիմպիադային Լոռու մարզը ունեցել է հանրապետական փուլի 39 (նախորդ տարում՝ 32) մրցանակակիր, նախորդ տարվա համեմատությամբ մրցանակակիրների թիվն ավելացել է 7-ով:

2019թ-ին ՀՀ Լոռու մարզից ՀՀ պետական ԲՈՒՀ-եր հայտագրվել է 906 դիմորդ, որից ընդունվել են 739 շրջանավարտներ: Նախորդ տարվա համեմատությամբ ԲՈՒՀ ընդունվողների թիվը կրկնապատկվել է (նախորդ տարի 370):

ՀՀ Լոռու մարզային ենթակայության՝ հատկապես գյուղական դպրոցներում մասնագետների պակասը լրացնելու համար ՀՀ Լոռու մարզպետարանը 2015թ-ից ի վեր համագործակցում է «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի հետ: Համագործակցության արդյունքում 2015, 2016 և 2017 թվականներին ՀՀ ԿԳ նախարարի հատուկ հրամաններով (2 տարի ժանկետով) ՀՀ Լոռու մարզի դպրոցներ են գործուղվել համապատասխանաբար 6, 12 և 22 մասնագետներ:

2018թ.-ին Լոռու մարզի դպրոցներում աշխատել են «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի կողմից գործուղված թվով 34, 2019 թ.-ին՝ 37 ուսուցիչներ:

- «Դասավանդիր, Հայաստան» ծրագիրը ստեղծում է այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր երեխա՝ անկախ իր սոցիալ-տնտեսական կարգավիճակից, կարող է ստանալ գերազանց կրթություն,-ասաց մարզի ղեկավարը:

Հավաքագրվել և ամփոփվել է տեղեկատվություն՝ ՀՀ Լոռու մարզի սահմանամերձ և լեռնային համայնքներում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող ուսուցիչների և աշակերտների մասին: ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող ուսուցիչների և աշակերտների փոխհատուցման համար 2019 թվականին հատկացվել է 2992 հազ դրամ: 2020 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 23160.0 հազ. դրամ /ավելացվել է 20168.0 հազ. դրամով/:

ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 22 հանրակրթական ուսումնական հաստատություն ունի « Սմարթ» դասարան:

2019 թվականին Լոռու մարզպետի նախաձեռնությամ մարզային ենթակայության դպրոցների 14 ինֆորմատիկայի ուսուցիչներ մասնակցեցին «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի կողմից իրականացվող Լոռու մարզի «Սմարթ» դասարաններ ունեցող դպրոցների ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների վերապատրաստման եռամսյա ծրագրին:

Մարզային ենթակայության 21 դպրոցներում սեպտեմբեր ամսից գործում են «Համակարգչային գիտություն» առարկայի խմբակներ, ինչը միտված է գյուղական և քաղաքային համայնքների երեխաների մոտ զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները, խթանելու աշակերտների մոտ այդ ոլորտում մասնագիտական կողմնորոշումը:

2016 թվականից սկսած ռոբոտաշինության խմբակների հիմքի վրա Լոռու մարզում ստեղծվել են թվով 22 «Արմաթ» լաբորատորիաներ:

ՀՀ կառավարության 2019թ-ի հուլիս 4-ի թիվ 872-Ն որոշման և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարարության հետ 2019թ-ի օգոստոսի 21-ին կնքված պայմանագրի համաձայն, մինչև 2019թ-ի տարեվերջ ՀՀ հանրակրթական համակարգի 284 դպրոցներում ներդրվել են Արմաթ ինժեներական լաբորատորիաներ, որից 118-ը Լոռու մարզի դպրոցներում: Ընդգրկվել են 33 -ից ավել աշակերտ ունեցող բոլոր այն դպրոցները որտեղ չեն գործում նման լաբորատորիաներ:

Ներկայիս՝ բարձր տեխնոլոգիաների ժամանակաշրջանում, այս լաբորատորիաները հնարավորություն են տալիս գյուղական և քաղաքային համայնքների երեխաների մոտ զարգացնել ինժինեռական միտքը, ծրագրավորման կարողությունները, թույլ են տալիս նրանց աշխատել բարձր տեխնոլոգիաների հետ և խթանում են երեխաների մասնագիտական կողմնորոշումը:



Մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների հաստիքների վերաբերյալ մարզպետը նշեց, որ 2019 թվականին մարզային ենթակայության թվով 31 ուսումնական հաստատությունում անց են կացվել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթներ: Այս պահի դրությամբ թվով 4 դպրոցում (Ստեփանավանի թիվ 2 հ/դ, Ստեփանավանի թիվ 3 հ/դ, Մեծավանի թիվ 2 մ/դ, Ահնիձորի հ/դ) տնօրենի պաշտոնի թափուր տեղերը դեռևս չեն համալրվել:

Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար 9 դպրոցների տնօրենների նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր, հիմնականում վերացվել են հայտնաբերված խախտումները, 2 տնօրեններ վաղաժամկետ ազատվել են զբաղեցրած պաշտոնից:

Հաստիքների վերանայման արդյունքում տնտեսվել են ֆինանսական միջոցներ, իսկ ֆինանսական միջոցների տնտեսման արդյունքում շուրջ 100 դպրոցներում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ: 2019թ. 2-րդ կիսամյակին վերաբաշխված միջոցների հաշվին ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են մի շարք շինարարական աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում» երկրորդ փուլով ընդգրկվել են Ալավերդու թիվ 2, Օձունի թիվ 2 և Վանաձորի թիվ 19 դպրոցները: Վանաձորի թիվ 19 դպրոցում այս պահին կազմվում են նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Մոդուլային դպրոցների վերաբերյալ մարզպետը նշեց, որ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում համապատասխան ֆինանսական միջոցներ են նախատեսվել փոքր թվակազմով երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար: Նշված ծրագրով նախատեսվում է ՀՀ համայնքներում փոքր թվակազմով երեխաներով համալրված (մինչև 100 սան ունեցող) սեյսմակայունության խնդիրներով հանրակրթական դպրոցների փոխարեն կառուցել մոդուլային շենքեր, որոնք կձառայեն և որպես հանրակրթական դպրոցներ, և որպես նախակրթարաններ, և որպես համայնքային մշակույթի կենտրոններ: «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում նախատեսվող փոքր թվակազմով աշակերտներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման 2019 թվականի ծրագրում Լոռու մարզից ընդգրկվել են Հազվու և Մեղովկայի դպրոցները, ընթանում են նախագծման աշխատանքները: 2020-2021թթ. ծրագրում առաջարկվել

է ընդգրկել Լոռու մարզի Մղարթի, Բլազադարնոյեի, Զիլիզայի և Կաթնառատի դպրոցները:

Մարզպետն անդրադարձավ նաև այս տարի իրականացված մշակութային և սպորտային միջոցառումներին:

2019թ. գյուղատնտեսության ոլորտի ձեռքբերումներին անդրադառնալով մարզպետը նշեց, որ 2019 թ. ընթացքում այս ոլորտում (պետական, միջազգային, մասնավոր) ներդրումները կազմել են շուրջ 4 մլրդ 323 մլն 390 հազար դրամ, նախորդ տարվա 1 մլրդ 950 մլն դրամի փոխարեն, աճը կազմում է 2 մլրդ 373 մլն 390 հազար դրամ կամ 45.1 տոկոս: Զերմոցային տնտեսությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 1,05 հա-ով կամ 95 տոկոսով և կազմել 2,15 հա: Սառնարանային տնտեսությունների հզորությունը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40 տոննայով կամ 10,6 տոկոսով և կազմել 415 տոննա: Հակակարկտային ցանցով պատված ինտենսիվ այգիները ավելացել են 0,8 հա-ով կամ 53,3 տոկոսով և կազմել 2,3 հա: Կաթիլային համակարգով ոռոգվող հողատարածքները ավելացել են 21,3 հա-ով կամ 67,6տոկոսով և կազմել 52,8 հա: Ինտենսիվ այգիները ավելացել են 10,9 հա-ով կամ 34,6 տոկոսով և կազմել 42,4 հա: Հակակարկտային կայանքների թիվը ավելացել է 16-ով կամ 39 տոկոսով և կազմել 57: Ոռոգվող հողատարածքները ավելացել են 874 հա-ով, փաստացի հնարավոր ոռոգվող շուրջ 2500-ի փոխարեն: ՀՀ պետական աջակցության ծրագրի շրջանակներում և մարզպետարանի աջակցությամբ, ինչպես նաև մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել են գյուղատնտեսական ծրագրեր:

Պետական օժանդակության ծրագրերի շրջանակներում իրականացվել են՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ 792, տրամադրված վարկերի գումարը՝ 3 միլիարդ 40 մլն. 350 հազար դրամ, «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 28 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 171 մլն.369 հազար դրամ, «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 3 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 21մլն.834 հազար դրամ, գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ 6 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 129 մլն 949 հազար դրամ, «Ոռոգման

արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 1 մարդ, տրամադրված փոխհատուցման գումարը՝ 252 հազար դրամ: Եվս 2 պետական աջակցության ծրագրեր կիրականացվեն 2020-2023թթ. ընթացքում, «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման» և «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման», որոնց վերաբերյալ արդեն իսկ մարզպետարանի կողմից համայնքներում իրականացվել են իրազեկման աշխատանքներ:

Գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման 2019 թվականի ծրագրի շրջանակներում Լոռու մարզի 28 համայնքներին հատկացվել է՝ ընդհանուր առմամբ 26,19 տոննա սերմացու, որով կատարվել է 287 հա ցանք: «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2019 թվականի աշնանը մարզին անհատույց հատկացվել է 498 լիտր «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան միջոց, որով հողօգտագործողների միջոցով պայքար է իրականացվել 6225 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում:

ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 13-ի N 1835-Ն որոշման համաձայն մարզի 22 բնակավայրերի 2557 հողօգտագործողների՝ 1509 հա ցանքատարածություններին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասները մասնակի փոխհատուցելու նպատակով հատկացվել է 52,53 մլն դրամ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ իրականացվել է 35339 ախտորոշիչ, իսկ տուբերկուլյոզի նկատմամբ 1553, սիբիրախտի՝ 70643, խշխշան պալար՝ 5646, դաբաղի՝ 69118, պաստերելյոզի՝ 45789, վարակիչ մաշկաբորբի՝ 23322 կանխարգելիչ միջոցառում: Մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ կատարվել է 1269 ախտորոշիչ միջոցառում: Խոզերի ժանտախտ հիվանդության նկատմամբ կատարվել է 27032, ծիերի սիբիրախտի՝ 362, թռչունների ժանտախտի՝ 78725 կանխարգելիչ միջոցառում, ընդհանուր թվով Լոռու մարզում իրականացվել է 358798 միջոցառում:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառման շրջանակում նախատեսված էր հետազոտել մարզի 8 համայնք, սակայն 2019 թվականի հետազոտվել է արդեն 11 համայնքի գյուղատնտեսական նշանակության 5573 հա հող: Հետազոտվող տարածքից վերցված 1955 հողանմուշում կատարվել է 4708 փորձաքննություն, կազմվել են ագրոքիմիական քարտեզներ:

Մարզպետարանի աջակցությամբ ՀՀ կառավարության հրատապ ծրագրով Լուսադբյուր համայնքում կառուցվել է 350մ երկարությամբ ոռոգման ցանց, ներ

է դրվել 7 մլն 500 հազ. ՀՀ դրամ: Համայնքում ոռոգելի հողատարածքները ավելացել է 30 հա-ով:

Գյուղատնտեսության ոլորտում սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Մեծավան համայնքում ձեռք է բերվել ԵՄ3-246K.20 մակնիշի տրակտոր 32 մլն դրամ արժեքով, որից 50 տոկոսը համայնքի միջոցներով, մյուս մասը պետական ներդրմամբ:

Լոռի բերդ համայնքում ձեռք է բերվել թվով 2 տրակտորներ՝ բելառուս MT3-1221.2 մակնիշի և թվով 4 գյուղգործիքներ՝ ընդհամենը 35.75 մլն դրամ արժեքով, որից 50 տոկոսը պետական միջոցներով

Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրում վերանորոգվել է 920 մ երկարությամբ ոռոգման գլխավոր ջրատարը 16,65 մլն դրամ ներդրմամբ, որի 65 տոկոսը պետական միջոցներով: Արդյունքում ոռոգելի հողատարածքները կավելանա շուրջ 600 հա-ով:

Գյուլագարակ համայնքում (Գարգառ 1-հատ, Կուրթան 1-հատ, Վարդաբլուր 1-հատ, Հոբարձի 1-հատ, Գյուլագարակ 1-հատ) տեղադրվել է ընդհանուր առմամբ թվով 5 հակակարկտային կայանքներ՝ 10.5 մլն դրամ արժեքով:

Լոռի բերդ համայնքում (Բովաձոր-2 հատ, Ուռուտ-2 հատ, Սվերդլով 2-հատ) տեղադրվել է ընդհանուր առմամբ թվով 6 հակակարկտային կայանքներ՝ 12.6 մլն դրամ արժեքով:

Օձուն համայնքում կառուցվել է 1403մ երկարությամբ ոռոգման փակ համակարգ, որի արդյունքում Օձուն համայնքի ոռոգվող հողատարածքները ավելացել են 80 հա-ով, իսկ Այգեհատ բնակավայրում 1300մ երկարությամբ ոռոգման համակարգ, որտեղ տնամերձերը կոռոզվի 20 հա-ով: Աշխատանքների վրա ներ է դրվել 34.778 մլն դրամ, որից 22.606 մլն դրամը պետական միջոցներով:

Կաթնաջուր համայնքում ձեռք է բերվել MT3 82.1 մակնիշի տրակտոր 8.3 մլն դրամ արժեքով և թվով 4 գյուղգործիքներ 5.33 մլն դրամ արժողությամբ:

Սարահարթ համայնքում կառուցվել է 880 մ երկարությամբ ոռոգման ներտնտեսային ցանց: Կատարված աշխատանքների վրա ներ է դրվել 16.15 մլն դրամ, որից 10.498 մլն դրամը պետական միջոցներով: Արդյունքում Սարահարթ համայնքի տնամերձերը կոռոզվի 52 հա-ով:

Հարթագյուղ համայնքում կատարվել են ոռոգման համակարգերի բարեկազման աշխատանքներ, որի արդյունքում ոռոգելի հողատարածքները կավելանան 92 հա-ով, կատարված աշխատանքների վրա ներ է դրվել 28.92 մլն դրամ:

Լեռնապատ համայնքում ձեռք է բերվել «Չինվան 804» մակնիշի տրակտոր և թվով 1-հատ գյուղգործիք ընդհանուր 9.28 մլն դրամ արժեքով:

«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակներում իրականացվում են.

Աջակցություն մարզում գործող «Դուստր Մելանյա», «Գագիկ Մամուկյան», «Տարոն Մաթոսյան» ՍՊԸ կաթի վերամշակման արտադրամասերին՝ արտադրությունները ժամանակակից սարքավորումներով վերազինելու գործում: Կատարվել է 66.5 մլն. դրամի ներդրում: Հիմնվել են 19 անասնաբուժական կետեր՝ Տաշիր ստեփանավան, Սարչապետ, Մեծավան, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Մարգահովիտ, Ջրաշեն համայնքներում: Կատարվել է 11.8 մլն. դրամի ներդրում: Ծրագրի շրջանակներում թվով 36 ֆերմերներ սուբսիդավորման եղանակով ձեռք են բերել 148 գլուխ բարձր մթերատու խոշոր եղջերավոր կենդանիներ: Կատարվել է 40.0 մլն. դրամի ներդրում: Ծրագրի շահառու 7 համայնքների (Մարգահովիտ, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Ստեփանավան, Տաշիր, Սարչապետ, Մեծավան) 35 բնակավայրերում ընթացքի մեջ է 91 միավոր արոտոյին ենթակառուցվածքի շինարարության գործընթացը: Կատարվել է 92.95 մլն. դրամի ներդրում: «Ֆամմա ֆուդ» ՍՊԸ արտադրողականության ծավալները ավելացնելու նպատակով կատարել է վերազինման և շինարարական աշխատանքներ: Ներ է դրվել 140 մլն. դրամ: Շարունակվում է Տաշիրի տարածաշրջանում գործող «Բոզոյան» ՍՊԸ-ի կողմից կառուցվող խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքները, ներ է դրվել 500 մլն. դրամ: Կառուցվում է Սպիտակի թոչնաբուծական ֆաբրիկայում ինկուբատորային արտադրամաս, ներ է դրվել 300 մլն. դրամ: Ախթալա համայնքի Մեծ Այրում բնակավայրում հիմնվել է 5 հա ընկույզի ինտենսիվ այգի: Ներդրման գումարը կազմել է 29 մլն. դրամ: Գուգարք համայնքում հիմնվել է 40 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսություն: Ներդրման գումարը կազմել է 35 միլ. դրամ, որից 13 մլն դրամը ներ է դրվել 2019թ-ն: Կարմիր Աղեկի բնակավայրում գործող «Վահե Հովհաննիսյան» Ա/Ձ-ի կողմից հիմնադրված թոչնաբուծական տնտեսությունում կատարվել է 7.2 մլն. դրամի ներդրում, որի արդյունքում ձեռք է բերել նոր սարքավորումներ և աժան հավեր: Սպանդանոցների վերաբերյալ մարզի ղեկավարը տեղեկացրեց, որ մարզում գործում է 2 սպանդանոց «Խասիկ Տիտանյան» ՍՊԸ (Օձուն համայնք) և «Միտք-Կ» ՍՊԸ (Դարպաս համայնք): Գործարկման փուլում են գտնվում ևս 2 սպանդանոցներ Տաշիր և Սպիտակ համայնքներում, որոնք կգործարկվեն 2020թ-ն: Հաշվի առնելով նշված սպանդանոցների արտադրական հզորությունները և նրանց գտնվելու վայրերը (առկա են Տաշիրի, Սպիտակի, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջաններում) մարզում մորթի ենթակա անասնազխաքանակը սպանդի ենթարկելու համար անհրաժեշտություն կա սպանդանոց հիմնել նաև Ստեփանավանի տարածաշրջանում: 2020թ.- նախատեսվում է նաև «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը»:

Ա. Ղուկասյանն անդրադարձավ նաև բնապահպանության ոլորտում իրականացվող ծրագրերին:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին անդրադառնալով՝ մարզպետը նշեց, որ Լոռու մարզը «Հ-ում առանձնահատուկ դիրք է զբաղեցնում

խնամատարության քանակական և որակական ցուցանիշներով: Հանրապետության ողջ տարածքում խնամատար ընտանիքներում խնամք և դաստիարակություն ստացող 48 երեխաներից 17-ը Լոռու մարզում են, այսինքն՝ խնամատարության գործընթացի 35.4 տոկոս-ը իրականացվում է Լոռիում: Մարզն առանձնանում է նաև խնամատար ծնող դառնալ ցանկացողների այսօրինակ առաքելության հանդես ունեցած համարձակ մոտեցմամբ: Ընտանիքներից մեկում խնամվում են առանց ծնողական խնամքի մնացած երեք երեխա և երեք ընտանիքներում՝ երկուական: 2019 թվականի խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց 50 տոկոսից ավելին Լոռու մարզից են: Դեկտեմբերի 24-ի դրությամբ Վանաձորի մանկատանը բնակվում է 35 երեխա: 2020թ. հունվարի 1-ին լուծարվելու է Վանաձորի մանկատունը, երեխաների մի մասը տեղափոխվելու է փոքր խմբով երեխաների տուն, 7 երեխայի նախատեսվում է տեղավորել խնամատար ընտանիքներ, 4 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, իսկ 18 տարին լրացած որոշ երեխաների համար կվարձակալվեն բնակարաններ նախարարության և բարերարների կողմից: Այն երեխաներին, որոնց համար նշված այլընտրանքները չեն կարող կիրառվել, կտեղափոխվեն հանրապետության այլ մանկատներ:

« Կառավարության 2017-2018 թթ-ին սոցիալական բարեփոխումների շրջանակներում խոշոր մանկատների ապահիստիտուցոնալացման գաղափարով ստեղծվեցին փոքր խմբով տներ՝ որպես այլընտրանք մեծ մանկատներին: Վանաձորում կա 2 փոքր խմբով տուն: «Հայկական Կարիտաս» բարեսիրական կազմակերպության կողմից 2018թ-ին ստեղծվել է Հայաստանում առաջին շուրջօրյա այլընտրանքային խնամքի «Սաբինե» փոքր խմբով տունը: Այժմ այնտեղ խնամվում են 7 երեխա: 2019թ-ի սկզբին «Հայ Օգնության Ֆոնդի» կողմից 1 տարի ժամկետով ստեղծվեց երկրորդ փոքր խմբով տունը: Այժմ այնտեղ կա 7 երեխա, որոնցից 4-ը մինչև տարեվերջ կտեղավորվեն խնամատար ընտանիքներում:

Տի ոլորտի հետ կապված մարզպետը նշեց, որ խոշոր ցաման գործընթացով պայմանավորված համայնքներում ոչ թե նվազել, այլ ավելացել են հաստիքները. եթե մինչ խոշորացումը խոշորացվող համայնքներում եղել են 1480 աշխատակիցներ, ապա դրանից հետո՝ 1566: Կրկնապատկվել ու եռապատկվել են նաև իրականացվող ծրագրերի ծավալները և՛ քանակական, և՛ գումարային առումներով: Հաջորդ տարվա համար 665 մլն դրամով կաճի նաև պետության կողմից համայնքներին տրվող դոտացիան:

Մարզը եկամուտների կատարողականով արդեն իսկ գերազանցել է 100 տոկոս ցուցանիշը, ինչը զգալիորեն կաճի վերջնական ամփոփումից հետո:

Մարզի ղեկավար անդրադարձավ նաև 2019 թվականի ընթացքում իր կողմից Լոռու մարզի դատախազություն ուղարկված թվով 34 գրությունների հետ կապված մանրամասներին: Դրանք վերաբերում էին ինչպես մարզի մի շարք համայնքների ղեկավարներին, այնպես էլ՝ նրանց ենթակայության հիմնարկներին:

- Անհանդուրժող եմ լինելու բոլոր նման դեպքերի նկատմամբ և հետևողական, որ դրանք այլևս չկրկնվեն, իսկ զանցառուները՝ պատժվեն,-ասաց Ա. Ղուկասյանը: Նա անդրադարձավ նաև համայնքների կողմից անցկացվող աճուրդներին՝ նշելով, որ համայնքների ղեկավարները երբեմն աճուրդների վերաբերյալ այնպիսի գրություններ են ուղարկում մարզպետարան, որոնք ի սկզբանե մերժման ենթակա են՝ քաղաքաշինական նորմերին չհամապատասխանելու հիմքով՝ այդպիսի փորձերով կեղծ տպավորություն ստեղծել քաղաքացիների մոտ, որ մերժողը մարզպետարան է:

-Այդ կեղծ մանիպուլացիան չի ստացվելու և քաղաքացիները քաջ գիտակցում են, որ մարզպետարանը գործում է բացառապես օրենքի շրջանակներում,-ասաց Ա. Ղուկասյանը:

Նա անդրադարձավ նաև մարզպետարանի կողմից իրականացված մի շարք այլ աշխատանքների ևս:

Մարզի ղեկավարը պատասխանեց նաև լրատվամիջոցների՝ «Հայաստանի Հանապետություն», «Լոռու մարզ» թերթերի, «Ֆակտոր.ամ» էլ.թերթի, «Արմենիա», «Ֆորտունա», «Անկյուն+3» հեռուստաընկերությունների, «Միգ» հեռուստառադիոընկերության, «Ազատություն» ռադիոկայանի լրագրողների կողմից հնչեցված տարաբնույթ հարցերին, որոնք վերաբերում էին ապօրինաշինությունների դեմ պայքարին, ապօրինի աճուրդներին, չգործող գործարանների հետագա ճակատագրին, անորակ շինարարական, այդ թվում նաև՝ ճանապարհաշինական աշխատանքներին և այլն, որոնց վերաբերյալ սպառիչ պատասխաններ հնչեցնելով՝ Ա. Ղուկասյանը նշեց, որ անհանդուրժող է լինելու ցանկացած անօրինական գործողության նկատմամբ և ջանք ու եռանդ չի խնայելու ապահովելու մարզի անխափան զարգացումը: 2020թ. անելիքներին և ակնառու ծրագրերին անդրադառնալով՝ մարզի ղեկավարը նշեց, որ չցանկանալով ժամանակից առաջ

ընկնել, այնուամենայնիվ ուզում է հայտնել, որ հատկապես Վանաձորի զարգացման հետ կապված լուրջ ծրագրեր են նախատեսվում:

Ամփոփելով ասույիսը՝ Ա. Ղուկասյանը շնորհավորեց ներկաներին առաջիկա տոների կապակցությամբ՝ նշելով, որ բարձր է գնահատում լրատվամիջոցների աշխատանքը տարաբնույթ խնդիրների բարձրաձայնման առումով և նշեց, որ պատրաստ է ակտիվ համագործակցության նաև 2020 թվականին: